Արաբկիրի համակարգող խորհրդի անհատական կազմի ձևավորման վերաբերյալ

Հայտարարություն

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016թ. փետրվարի 11-ի թիվ 25-Ն և 2016թ.-ի հունիսի 14-ի թիվ 64-Ն հրամանները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Արաբկիրի տարածքային բաժինը (այսուհետ՝ ՍԱՏԲ) սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով տարածաշրջանում համաձայնագրի կողմեր հանդիսացող սուբյեկտներին՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպությունների, ինչպես նաև ֆիզիկական անձանց (այսուհետ՝ կողմեր) հրավիրում են հայտագրվելու և ձևավորելու համակարգող խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ):

Խորհրդի կազմում պարտադիր ընդգրկվում են տարածաշրջանում գործող,ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշման 1-ին կետով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների մեկական ներկայացուցիչներ, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ներկայացուցիչներ և ֆիզիկական անձինք:

Խորհուրդը գործելու է խորհրդի անհատական կազմը ձևավորվելուց հետո երկու տարի ժամկետով:

Կողմերը խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ իրենց առաջարկությունները /հայտերը/ կարող են ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Արաբկիրի տարածքային բաժին մինչև 2020 թվականի փետրվարի 15-ը /հասցեն Կոմիտասի 56 հեռ. 011-518-209/:

Հայտագրման համար ներկայացվող նվազագույն պահանջներն են.

ա) սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փորձը,

բ) սոցիալական ծառայությունների տրամադրման ծրագրերի իրականացումը:

Գործընթացի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներառված է տարածքային մակարդակով սոցիալական համագործակցության համաձայնագրում:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
Արաբկիրի սոցիալական աջակցության տարածքային բաժին